ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 10-Ի N 1136-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

N - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 10-Ի N 1136-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 10-ի «Ցեմենտներին, պորտլանդցեմենտային կլինկերին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1136-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի՝

1) 1-ին կետում «Պորտլանդցեմենտ 2523» բառերը փոխարինել «Պորտլանդցեմենտ 2523 10 000 0, 2523 21 000 0, 2523 29 000 0, 2523 30 000 0, 2523 90 000 0» բառերով.

2) 3-րդ բաժնի վերնագրում «Շուկա մուտք գործելու պայմանները» բառերը փոխարինել «Շուկայահանմանը ներկայացվող պահանջները» բառերով.

3) 5-րդ կետում «պորտլանդցեմենտային կլինկերի» բառերից հետո լրացնել «արտադրությունը, փոխադրումը և» բառերով.

4) N 2 աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Աղյուսակ N 2

Ամրության դասը	Ճռման ամրությունը 28	Սեղմման ամրությունը, ՄՊա, օր հասունությամբ	Կապակցումը	Ծ հա

	օրական հասանելացմամբ, ՄՊա, ոչ պակաս	Վաղ ամրություն		Ստանդարտ ամրություն				փո
		2 օրական, Ոչ պակաս	7 օրական, Ոչ պակաս	28 օրական ոչ պակաս	ոչ ավելի կաս	Սկիզբ, որոպե, Ոչ շուտ	Վերջ, ժամ, ոչ ուշ	կո
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.
22.5 N	-	-	11.0	22.5	42.5			
32.5 N	5.5	-	16.0	32.5	52.5	75	10	
32.5 R	5.5	10.0	-					
42.5 N	6.0	10.0	-	42.5	62.5	60	10	
42.5 R	6.0	20.0	-					10
52.5 N	6.5	20.0	-	52.5	-	45	10	
52.5 R	6.5	30.0	-					
Ցեմենտի աղացվածքի մանրությունը ըստ N 008 մաղի վրայի մնացորդի, %, ոչ ավել								15
Ցեմենտի աղացվածքի մանրությունը ըստ տեսակարար մակերեսի, սմ^2/գ								28

».

5) 15-րդ կետում «ԳOUS 31108-2003» բառերը փոխարինել «ԳOUS 31108» բառերով.

6) 17-րդ կետում «և պահման» բառերը փոխարինել «, իրացման և պահման» բառերով.

7). 30 - 33-րդ և 35-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել.

8). 39-րդ կետում « և այլ» բառերից առաջ լրացնել «օրենքներով» բառը.

9). 11-րդ բաժնում տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջների կատարումն ապահովող ստանդարտների ցանկը լրացնել հետևյալ տողերով՝

«

ԳOUS 30515	Ցեմենտներ. Ընդհանուր տեխնիկական պայմաններ
ԳOUS 31108	Ցեմենտներ համաշինարարական. Տեխնիկական պայմաններ

»:

2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ սույն որոշման պաշտոնական հրապարակմանը հաջորդող երկամսյա ժամկետում ապահովել որոշման 1-ին կետի 9-րդ ենթակետով սահմանված պահանջների կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկի հրապարակումը:
3. Սույն կետն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 180-երորդ օրը: